ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ `

Հաստատել համայնքի ավագանու թիվ 1 նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ .

1. Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբեր 24-ի թիվ 26-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :
2. Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2015թվականի չորրորդ եռամսյակի կատարողականի մասին :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 2-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ `

Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի <<Համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին>> թիվ 26-Ն որոշման կատարել փոփոխություններ կամ լրացումներ ,և այն շարադրել նոր խմբագրությամբ ` համաձայն հավելվածի :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արարատի մարզի
Բերդիկ համայնքի ավագանու
2016 թվականի հունվարի 13-ի թիվ 2 -Ն որոշման

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Եկամուտների գծով – 20 762.2 հազ. դրամ ,
Ծախսերի գծով –20 762.2 հազ. դրամ ,
Դոտացիա – 15 659.7 հազ. դրամ ,
Գանձապահական հաշվի մնացորդ առ 01.01.2016թ. – 2 225.917 հազ. դրամ :

Վարչական բյուջեի եկամուտները ընդամենը ՝	20762.2 հազ. դրամ ,
1 . Հարկային եկամուտներ ՝	*4330.0 հազ. դրամ ,*
այդ թվում ՝	
ա. հողի հարկ՝	2500.0 հազ. դրամ ,
այդ թվում ՝	
ֆիզիկական անձանցից ՝	2500.0 հազ. դրամ ,
բ. գույքահարկ շենք շինություններից ՝	70.0 հազ. դրամ ,
այդ թվում ՝	
ֆիզիկական անձանցից ՝	70.0 հազ. դրամ,
գ. գույքահարկ փոխադրամիջոցներից ՝	1700.0 հազ. դրամ,
դ . տեղական տուրքեր ՝	60.0 հազ. դրամ ,
այդ թվում ՝	
ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն ՝	30.0 հազ. դրամ ,
ծխախոտի վաճառքի թույլտվություն ՝	30.0 հազ. դրամ ,
2. Ոչ հարկային եկամուտներ ՝	*772.5 հազ. դրամ ,*
այդ թվում ՝	
վարձակալական հողերի վարձավճար ՝	772.5 հազ. դրամ ,
3. Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ ՝	*15659.7 հազ. դրամ ,*
այդ թվում ՝	
դոտացիա ՝	15659.7 հազ. դրամ ,

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

4111 – 10034.4 հազ. դրամ – աշխատավարձ ,
4212 – 900.0 հազ. դրամ – էներգետիկ ծառայություններ
որից ՝ 600.0 հազ. դրամ – վարչական շենքի և փողոցների լուսավորման համար էլեկտրաէներգիայի վարձավճար ,

300.0 հազ. դրամ –վարչական շենքի ջեռուցման համար դիզ.վառելիքի ձեռքբերում ,
4213 – 1000.0 հազ. դրամ – կոմունալ ծառայություններ ,
4214 – 120.0 հազ. դրամ – ինտերնետային կապի ծառայություն ,
4215 – 33.0 հազ. դրամ – ծառայողական մեքենայի ապահովագրական ծախսեր ,
4232 - 100.0 հազ. դրամ – համակարգչային ծառայություններ ,
4234 - 100.0 հազ. դրամ – թերթերի բաժանորդագրություն ,
4251 - 980.0 հազ. դրամ – փողոցների խճապատում ,
4261- 500.0 հազ. դրամ – գրասենյակային պիտույքների ձեռքբերում ,
4264 – 1 000.0 հազ. դրամ –տրանսպորտային նյութեր ,
որից՝ 600.0 հազ. դրամ - ծառ. մեքենայի վառելիքի /գազ/ ձեռքբերում ,
400.0 հազ. դրամ – ավտոպահեստամասերի, յուղի,անտիֆրիզի ձեռքբերում,
4269 – 473.8 հազ. դրամ – այլ նպատակային նյութեր՝միջոցառումների համար ,
4637- 400.0 հազ. դրամ - ֆինանսական աջակցություն դպրոցին ,
4726 - 400.0 հազ. դրամ – հուղարկավորությունների ծախսեր ,
4729 – 2400.0 հազ. դրամ – այլ նպաստներ բյուջեից ,
որից ՝ 200.0 հազ. դրամ – հիվանդներին ,
200.0 հազ. դրամ – ազատամարտիկներին ,
2000.0 հազ. դրամ – անապահով ընտանիքներին ,
4819 – 110.0 հազ. դրամ – նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպությ,
որից ՝ 100.0 հազ. դրամ – Արարատ հիմնադրամին ,
10.0 հազ. դրամ – Օլիմպիկ հիմնադրամին ,
4823 – 11.0 հազ. դրամ – ծառայողական մեքենայի տեխզննություն ,
4891 – 2200.0 հազ. դրամ - պահուստային ֆոնդ ,
5112 – 600.0 հազ. դրամ – արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում ,
5113 – 1525.917 հազ. դրամ – վարչական օբյեկտների հիմնանորոգում ,
5133 – 100.0 հազ. դրամ – հողերի գեոդեզաքարտեզագրական ծախսեր :

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի և 69-րդ հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2015թ-ի չորրորդ եռամսյակի կատարողականի մասին գնահատել դրական և ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2016 թվականի հունվարի 13-ի թիվ 3 որոշման

ԵՌԱՄՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

2016 թ-ի հունվարի 12-ին Բերդիկ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում՝ նախագահությամբ համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյանի , քարտուղարությամբ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Զ. Ղազարյանի: Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, բուժամբուլատորիայի աշխատակիցները, դպրոցի տնօրենն ու մանկավարժական կոլեկտիվը ,համայնքի բնակիչները :
ԼՍԵՑԻՆ՝ Արարատի մարզի Բերդիկ համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյանի հաշվետվությունը՝ 2015-ի չորրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ :
ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ՝
Նշված ժամանակահատվածում Բերդիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 45 դիմում , ինչպես նաև բազմաթիվ բանավոր հարցումներ : Դրանք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել համապատասխան լուծումներ:
- Գյուղապետարանը բնակիչներին տվել է 60 տեղեկանք , ստացել է 35 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են ու սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:
- Համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ են իրականացվել, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները , կուտակված կենցաղային աղբը տեղափոխվել է Ուրց- Կոտայքում գտնվող աղբանոց: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման , սահմանների ճշգրտման , հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:
- 2015թ-ի նշված ժամանակահատվածում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա) հողի հարկ – 2 500 000 դրամ / 100 %/ ,
բ) գույքահարկ – 1 500 000 դրամ / 84,7 % / ,
գ) տեղական տուրք – 80 000 դրամ / 100 % / ,
դ) վարձակալված հողի վարձավճար – 493 600 դրամ / 168 % / ,

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ- տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են՝

ա / համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել է ֆինանսական աջակցություն՝ 2 200 000 / երկու միլիոն երկու հարյուր հազար / դրամ ,
գ / հուղարկավորությունների համար հատկացվել է անհատույց դրամական աջակցություն՝ 310 000 / երեք հարյուր տասը հազար / դրամ :

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Զարուհի Ղազարյան